Document 12a

Ref. Ares(2020)4118110 - 05/08/2020

Ref. Ares(2020)2507290 - 12/05/2020

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ**
**PRIME MINISTER OF THE REPUBLIC OF ARMENIA**

*Երևան, 9 մայիսի 2020 թ.*

Ձերդ Գերազանցություններ,

Ընդունեք խնդրեմ ջերմ շնորհավորանքներս Եվրոպայի օրվա կապակցությամբ:

Եվրոպական միության ստեղծումը 20-րդ դարի ամենանշանակալից իրադարձությունն էր: Տասնամյակներ ի վեր այն գնահատվում է իբրև ժամանակակից աշխարհում համագործակցության, համերաշխության և առաջընթացի խորհրդանիշներից մեկը:

Այս տարի, ցավոք, Եվրոպայի օրը ստիպված ենք նշել արտակարգ պայմաններում: Նոր տիպի կորոնավիրուսի համավարակը լուրջ փորձություն է ամբողջ աշխարհի, այդ թվում Եվրոպայի համար: Այս առնչությամբ, ողջ հայ ժողովրդի և իմ անունից զորակցություն ու համերաշխություն եմ հայտնում Ձեզ և Եվրոպական միության բնակչությանը:

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ
ՊԱՐՈՆ ՇԱՌԼ ՄԻՇԵԼԻՆ
*ԲՐՅՈՒՍԵԼ*

ՆՈՐԻՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՒԹՅՈՒՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
ՏԻԿԻՆ ՈՒՐՍՈՒԼԱ ՖՈՆ ԴԵՐ ԼԱՅԵՆԻՆ
*ԲՐՅՈՒՍԵԼ*

Թույլ տվեք նաև հայտնել խորին երախտագիտությունս այն աջակցության համար, որ Եվրոպական միությունն այս դժվարին իրավիճակում պատրաստակամություն է հայտնել տրամադրելու Հայաստանի Հանրապետությանը համավարակի դեմ պայքարի և տնտեսական դժվարությունների հաղթահարման նպատակով:

Լիահույս եմ, որ այս մարտահրավերը համատեղ ուժերով հաղթահարելուց հետո նոր լիցք կհաղորդենք ՀՀ-ԵՄ համագործակցությանը, որը խարսխված է ընդհանուր արժեքների և մեր ժողովուրդների միջև գոյություն ունեցող փոխադարձ համակրանքի վրա:

Խորին հարգանքով՝

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ